


Ե Հ Ո Վ Ա Ն

Է ԷՖԱՆԹԵՆԻ ՄԷՋ



հերկայ գրութիամբ մպատակ ունիմք, եզրպտոսի էլէֆանթին կղզւոյն մէջ հղած գլտիոր մերկայացնելու. ամոմք կարեւոր հն ո՛չ միայն իրրկ գիտութեամ մորամոր յայտնութիւններ, այլ որովհետև ամոմք մէջ կը քիչատակուի Աշտ միջկամը (ճայ՝ հիթ ամոմք բառակամ ապացոյց մը կարող է ըլլալ) եզրպտոսի կառավարիչ, Այգ անձի գրաւած դիրքը ցոյց կու տայ թէ Աքսիմեան արքունիքի մէջ ալ չայիւր մշամաւոր պաշտօններ ծնող բերած են:

Երկիրը՝ ուր պապիրոսը կը ծաղկի, հնարաւորութեան օրհնեալ զաշտ մ'է: Ամէն օր նորանոր պատկառելի հնութիւններ յերևան կու գան: Դեռ երէկ Մենանդրի կորստած կատակերգութիւնները բանասէրներու մեծ հրճուանք պատճառեցին: Քիչ յառաջ, Յիսուսի Լոդիաները, որ գմեզ քրիստոնէութեան ակունքը կը բարձրացընեն, Վաղը ո՛ գիտէ երբայական Աստուածաշունչ մը՝ Սարիբայի Աստուածաշունչն աւելի վաւերական:

1904 ին երբ Էլէֆանթինի բնիկները՝ փլատակներու հողերը կը փորէին, դիպուածով տաննեակ մը պապիրոսներու բուրբառէ կնքուած գլանի մը հանդիպեցան: Անմիջապէս գնեց զանոնք Պ. Մոնտ և Վիլհէլմ Սէսիլ, որոնք նոյն ատեն Եզրպտոս կը գտնուէին, և քիչ վերջ Պ. Քուէյ, հրատարակեց զանոնք (Ռաֆորտի մէջ, Բնագիրները դեռ անարատ վիճակի մէջ էին, ընդարձակ ծաւալով արամական սքանչելի տառերով՝ որ բոլորովին նման էին ցարդ մեզ ծանօթ յիշատակարանաց մէջ գտնուածներուն: Այս ամէնը գործն է հրեայներու, որոնք Նեղոսի արեւելեան ակունքին վրայ Սիէն ըսպաքը կը բնակէին, հիշող Էլէֆանթին կղզիին դիմաց: Շատ կարեւոր դէպք մ'էր այս պատմութեան համար: Հրեայները արքորի ժամանակ շատ մը սովորութեանց հետ լրած են

ազգային լեզուն ալ, արամականը գործածելու համար:

Այս պապիրոսները նոտարներէ ստորագրուած՝ կարգէ դուրս հետաքրքրական գործեր են, ամենանհիշող կերպով Քսերքսէսի, Արտաշէսի և Գարեհի թագաւորութեանց թուականները կը կրեն և կը նշանակեն մանրամասն տարիներ՝ ամիսը՝ օրը՝ ծաւալներով արամական և եզրպտական օրացոյցներու գուգրնթացութիւնը, վաթսուն տարուան շրջան մը կը գրուեն, որ է 470—460 մեր թուականէն առաջ: Յօրինուած՝ ճարտար զայրներէ և ստորագրութիւններով ծեփուած՝ կը ներկայացընեն շատ մը գործաւորութիւններ, — գնել, ծախել, շարժուն և անշարժ ստացուածոց պարգևատուութիւն, դատեր, վէճերու լուծում՝ դատաւորի կամ բարեկամներու ներկայութեամբ, դաշնագրութիւն ամուսնութեան՝ նախատեսելով և կանոնաւորելով ամուսնալուծութեան պարագաները, ի նկատի առնելով ամուսններու և որդեղ վիճակը. մանրամասն նկարագիր մ'է սա՝ հրեաներու ընտանեկան կենաց:

Յիշատակարանաց այս անմասն ամբողջութիւնը՝ անարատ երևան ելած՝ անշուշտ ընտանիքի մը դիւանէն, ամենաթանկագին տեղեկութիւն կու տայ մեզ Էլէֆանթինի մէջ Քրիստոսէ հինգ դար յառաջ հրեայ մեծ ժողովրդեան մը գոյութեան՝ անոնց լեզուին, գրութեան, բարբերու, հաստատութեանց, դասաների, պարսիկ իշխանութեան և եզրպտական ժողովրդեան հետ ունեցած յարաբերութեանց նկատմամբ: Այս յիշատակարանաց մէջ կայ մին՝ որուն հանդէպ միւսները կը տեղանին, այն՝ որ կը վերաբերի Խարայելի Աստուծոյն Շատ մը ձեռնարկութեանց մէջ կը յորջորջին իր անունը՝ առանց խղճահարութեան մինչ աւելի ուշ՝ անճառելի Գառատոտ մը պիտի ըլլար ան: Եւ արհամարհելով աւանդական արգելումը, չեն վախճած մրցելու Երուսաղէմի կործանեալ տաճարին հետ՝ հիմնելով այս արքորի և Քաղթեպեանութեան միջակայքին մէջ՝ Եհովայի տաճար մը, որ թերեւ հառաչել տուած է Երեւ

միայն։ Ո՛չ լուկ ժողովրդանոց կամ աղօթարան, այլ կատարեալ տաճար, ուր կը կատարուէին ամբողջապէս Աստուածային պաշտամունքը, սեղան մը ուր զոհերու արեւին կը հոսէր և իտեակերու բոլոր դէպ երկինք կը բարձրանար, ամենայն ինչ համանման Սիոնի ծաղկեալ օրերուն։

Այնչափ տարւոյ նոյնմբեր ամսոյ մէջ, Արձանագրութեանց Ակադեմիան՝ համաձայն հասարակաց կրթութեան նախարարին հետ՝ նուիրակութիւն մը խաբէց Էլէֆանթին, որուն վարիչ զիս անուանեցին, մեկնեցալ՝ առաջադրելով գտնել փողոցը՝ ուր հրեայ գաղթականութիւնը կը բնակէր և մանաւանդ Եւրոպայի տանըրը։

Մեզմէ առաջ հոն գերման նուիրակութիւն մ'եկած էր և « Անգագոն փոսեց » սկիւրք եւեր»։ — *Tarde venientibus ossa*.

Երկար և տաժանելի խարխափումներէ յետոյ՝ բաղդը մեզ ժպտեցաւ. հրեայ արամական փողոցի մը մէջ մտանք։ Այս գիւտը՝ ինծ մեծ խրախոյս և հաճոյց պատճառեց, մեր պիղած երկրին մէկ անկեան մէջ՝ գտած էինք բազմութիւն մը ոստրէներու՝ ծածկուած հրեայ-արամական արձանագրութիւններով, Հակառակ իրենց յաճախ կոտորած ըլլալուն՝ կը ներկայացնեն մաս մը այն ներքին և օրական յարաբերութեանց զոր սենէին Էլէֆանթինի հրեայները իրենց Սիւնի կրօնակիցներուն հետ։ Պապիրոսները մի և նոյն դարու կը վերաբերին։ Մի և նոյն գիր՝ և մի և նոյն լեզուն էր. աւելին կայ՝ ստորագրողները և անոնք՝ որոնց ուղղուած էր գրութիւնը՝ ճիշդ նոյն անձինքնեքն են՝ զորս արդէն պապիրոսները մեզ ծանօթացուցեր էին։ Հաստատապէս անոնց մէջ ալ կը զրուատեն Եւրոպայի անունը, առանձին ուղղագրութեան մը ձեւին տակ՝ որուն դեռ ևս չէինք հանդիպած։ Այս ոստրէները պիտի ընծայեն մեզ՝ ապակովապէս՝ երբ անոնց ընթերցումը աւարտի՝ բազմաթիւ հետաքրքրական նորութիւններ։

Մեզ մօտ աշխատող գերման նուիրակութեան կատարուած գիւտ մը՝ թանկա-

զին լուսարանութիւն մը կու տար այս առեղծուածի մասին։ Փոխադարձ իրարու զիջած սահմանէն հազիւ քառասնեակ մը մետր հեռու՝ Պ. Ռիպլէնսըն գտած է հրեայ-արամական նոր պապիրոսներ՝ որոնց ընթերցումը յաճնուած է Պերլինի ուսուցիչ Սոլոյի։ Ասիկայ դեռ նոր երեցած տեղեկագրի մը մէջ կը ծանօթացնէ մեզ ասոնցմէ երեքը։

Գլխաւորը յիշատակարան մ'է, յոյժ հետաքրքրական։ Կը վերաբերի Հրէից և աստուածաշնչի պատմութեան, կը լուսաւորէ շողշողուն լուսով մը՝ Էլէֆանթինի այս հատակոտոր յիշատակարանները, և ի միջի այլոց Էլէֆինիկ պապիրոսը՝ որ դեռ մասամբ միայն յերեան կը հանէ ճըշմարտութիւնը։

Անոնց վերլուծումը զոր պիտի դնեմ հոս՝ կ'երաշխսորէ որ չափազանցութիւն չէ ըսածս։

Աղբսագիր մ'է սա՝ յօրինուած Մարհէստան ամսոյ 20ին. Դարեհէի թագաւորութեան ժիւ տարին (418 ն. թ. մեր թուականը) ուղղուած Պակոհի իշխանին՝ որ կը պարսիկ կառավարիչ Յուդայաստանի, Յեզոնիայի և իր պաշտօնակիցներուն կողմէն, յանուն այս քաղաքի բոլոր հրեայ բնակիչներուն։ Աստուածներու Աստուծոյն օրհնութիւնը՝ իշխանի գլխուն մաղթելէ վերջ — գրեթէ թորիկի պապիրոսներուն համանման բացատրութիւններով — մաղթելով որ ասիկայ վայելէ միշտ Դարեհի բարեպալկամութիւնը՝ աղերսարկուները հետեալ դէպքերը կը ներկայացնեն։ Երեք տարի յառաջ՝ Արշալէ Եգիպտոսի սատրապին բացակայութեան տառն, որ Դարեհ թագաւորին մօտ կանչուած էր, Էլէֆանթինի Գնհում աստուծոյն եգիպտացի քուրմերը՝ Ուխտանկ տեղական կառավարչին հետ դաւաղութիւն մը կազմեցին՝ որ զրամով կաշառուած էր անոնցմէ, ինչպէս արդէն ծանօթացուցած էին Էլէֆինիկ պապիրոսները։

Այնչէ պատուէր կ'ընդունին՝ միանալով Սիւնի զինուորական հրամանատարին հետ երթալու Եւրոպայի տաճարը կործանելու,

որ կը բարձրանար Էլէֆանթին կղզիին մէջ, Այս տաճարը կ'ըսեն, շինուած էր ատենօք իրենց հայրերէն: Երբ կամբիւս աշխարհակալեց Էգիպտոսը՝ նա արդէն գոյութիւն ունէր: Ասիկայ յարգեց զանի, մինչդեռ բոլոր Էգիպտացիներունը հիմնա-յատակ քանդել կու տար: Իրենց հարեւանցի բրած նկարագրին համեմատ՝ հո-յակապ շէնը մ'եղած է անիկայ, յօրե-նուած սրբատաշ քարերով, եօթը շքեղ դռներով, միակտոր սիւներով և եղենա-սիւստէ տանիքով: Անգթօրէն Ռիտրանկի հրամանը գործադրուեցաւ: Գունդը՝ խուժը մը եգիպտացիներու օգնութեամբ՝ պատ-կառելի տաճարը հիմնայատակ բրաւ՝ խոր տակելով և հրդեհելով ինչ որ կը պարու-նակէր, կողոպտելով բոլոր ոսկիէ և ար-ծաթէ անօթները, ինչպէս նաև միւս մե-ծագնի առարկաները: Էլէֆանթինի բոլոր հրեայ ժողովուրդը, այր՝ կին և տղայ, այս աղէտին պատճառաւ սուգի և հեծու-թեան մէջ ընկղմած, սեւագգեստ՝ ծովա-պահուցեամբ՝ Եշովան աստուածներու Աւ-տուածը՝ օգնութեան կը կանչեն:

Կը դադրեցնեն գինւոյ և օծութեան սո-վորոյթը. կիններ իբրև թէ այրիացած ըլ-լային՝ կ'ողբան տխրօրէն իրենց սրբավայ-րին քանդումը: Փիչ ժամանակ վերջ Ռի-տրանկ կառավարիչը թագաւորին երեսէն իրկաւ. բնագիրը եթէ չեմ սխալիր ող-բերգական մահ մը կ'ակնարկէ:

Սակայն, խորայեւացի ազերսարկուները հակառակ իրենց բազմաթիւ ձեռնարկնե-րուն, չկրցան մինչև այս օրս՝ իրենց տա-ճարը վերականգնելու հաւանութիւնը ձեռք բերել, այնպէս որ երեք տարիէ ի վեր սեւերը չմերկացան, ծխական նուիրումնե-րը՝ խնկարկութիւնը՝ և ողջակէզները՝ առ-տուածներու Աստուածին Եշովայի սեղա-նին վրայ նուիրել չկարենալնուն համար: Ի զուր առաջին բողոքագիր մը ներկա-յացուցին Յուդայաստանի կառավարիչ Պա-հօհի ինչպէս նաև Ոհանամի՝ Երուսա-ղէմի քահանայապետին և իր ընկերնե-րուն, անոր եղբոր Սաթան Անանիայի և Յուդայաստանի իշխաններուն, իրենց ա-

զերսագիրները անպատասխան մնացին: Այս պատճառաւ երկրորդ անգամ կու գան պաղատիլ Պակօհիի որ հրաման տայ ի-րենց Եշովայի տաճարը Էլէֆանթինի մէջ վերականգնելու, ինչպէս որ էր նախա-պէս: Ի շնորհակալութիւն այս շնորհին՝ վերականգնուած սեղանին վրայ իր ա-նուամբ Եշովայի զոհեր պիտի նուիրեն, և մինչև անոր շինութիւնը՝ Էլէֆանթինի բոլոր հրեայները՝ այր կին և մանկո՜ր՝ անդադար պիտի աղօթեն Պակօհիի համար: Ասկէ զատ՝ կը հասկցնեն անոր թէ՛ դեռ աւելի կարեւոր օգուտներ պիտի քաղէ ան-կից, զոհերը և պատարագները հազար տաղանդի հասոյթ մը պիտի բերեն իրեն, առանց ի նկատի առնելու ոսկին՝ զոր ար-դէն ընդունեցաւ. դարձեալ և միշտ արեւ-ելլելի այս յաւիտենական պարբեր-վացներով աղերսագիրը՝ կը յայտնեն որ հաւասարապէս Սամարիայի կառավարչին Սանապալատի որդիներուն Պէլայահի և Քէլէմյահի ալ տեղեկութիւն տուած են այս մասին և թէ Արլամ, (Գարեհի մօտ կան-չուած) տեղեկութիւն չունի տաճարին քան-դուման մասին:

Երկրորդ պապիրոս մը՝ մատամբ աւ-րուած, սակաւ ինչ տարբերութեամբ, կը պարունակէր այս ազերսագրին պատճէնը, որմէն շահ ունեցողները անտարակոյս իրենց քով պահած են օրինակը որ ամբողջո-վին մինչև մեզ հասած է: Երրորդ պա-պիրոս մը կը բովանդակէ ամենահամա-ռօտ ծանօթութիւն մը՝ ոսկից յայտնի կ'երևայ որ շնորհիւ Պակօհիի և Տէլա-յայի միջնորդութեան՝ աղերսուած թոյլ-տուութիւնը կը շնորհուի, տաճարը կը վերականգնի և աստուածային պաշտամուն-քը կը վերահաստատուի: Գործը տարա-կոյսէ զերծ է, ինչպէս կ'երևի պապիրոսի դեռ չհրատակուած բեկորներէն, որ վերա-շինութեան ծախուց հետ յարաբերութիւն ունին:

ՊԼԵՏՈՐԵ ՅԱՆՈՅ

